ԲԱԺԻՆ 4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ՆԱԽԱԲԱՆ

Եվրոպական միությանն (ԵՄ) ինտեգրումը Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ ռազմավարական գերակայությունն է: ԵՄ ինտեգրումը երկարաժամկետ և բարդ գործընթաց է, որը ներառում է տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտները և որտեղ ներգրավվում են մեծածավալ մարդկային ռեսուրսներ: Այն պահանջում է հատուկ այդ նպատակի համար հատկացված ռեսուրսներ, պատրաստված մասնագիտական կադրեր և կառավարման համակարգ: Հայաստանում ԵՄ ինտեգրման կառավարման համակարգը պետք է նախագծվի այնպես, որ առավելագույնս և արդյունավետ կերպով օգտագործվեն ԵՄ ինտեգրման փորձ և (կամ) գիտելիքներ ունեցող սակավաթիվ որակյալ մասնագետները, սուղ ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև գործող կառույցների կարողությունները:

ԵՄ նոր անդամ և թեկնածու երկրների փորձը ցույց է տալիս, որ ԵՄ ինտեգրման գործընթացն ունի ծրագրային բնույթ: Այն հիմնվում է մի շարք հատուկ ռազմավարական ծրագրերի վրա: Գործընթացը ձևավորում է մի շարք փոխկապակցված գործողություններ: Դրանք են՝

- ԵՄ ինտեգրման գործընթացի կառավարումը, համակարգումը և վերահսկումը, ինչը ենթադրում է օրենսդրության և քաղաքականության համապատասխանեցումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծումն ու ուժեղացումը.
- ԵՄ ինտեգրման գործընթացին ուղղվելիք ֆինանսական օժանդակության ծրագրավորումն ու համակարգումը.
- ԵՄ ինտեգրման գործընթացի շուրջ բանակցությունների վարումը.
- ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացումը.
- մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը.
- հասարակության իրազեկումը, հասարակական կազմակերպությունների, միությունների և հասարակության այլ շահագրգիռ անդամների ակտիվ ներգրավումը ԵՄ ինտեգրման գործընթացում:

ԵՄ ինտեգրումը Հայաստանի Հանրապետության համար նոր գործընթաց է: Դրա բարդությունը և երկարաժամկետ բնույթը պահանջում են մասնագիտացված և խնդիրների բարդությանը համահունչ ստեղծված կառավարման համակարգ, որի ներդրումը, պահպանումն ու զարգացումը Հայաստանում անհրաժեշտ է:

Հաշվի առնելով ԵՄ նոր անդամ և թեկնածու երկրների ինտեգրման փորձը, ինչպես նաև Հայաստանի ներկայիս ռեսուրսային կարողություններն ու պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները՝ այդ համակարգը կառուցված է լինելու հետևյալ սկզբունքների հիման վրա.

- համակարգի կառուցման մոդուլային սկզբունք, որը պահանջում է, որ ինտեգրման գործնթացի ամեն մի շրջանակը ներկայացված լինի կառավարման առանձին մոդուլով, որոնց ռեսուրսային ապահովման աստիճանը ուղղակիորեն կախված կլինի ինտեգրման գործընթացում դրա նշանակությունից և անհրաժեշտության դեպքում հնարավորություն կտա զարգացնելու մոդուլները.
- ԵՄ ինտեգրման գործընթացի ընդհանուր կառավարումը և համակարգումը կառավարության կողմից, որին անհրաժեշտ է հատուկ մասնագիտացված կառույց.
- ԵՄ ինտեգրման գործընթացով շահագրգռված կողմերի առավելագույն մասնակցության և բոլոր այլ շահագրգիռ ոչ պետական կազմակերպությունների ու քաղաքացիների և լիազոր պետական մարմինների հետ երկկողմանի կապի ապահովումն ու նրանց շահերն ու
- նպատակները հաշվի առնելը, ինչի համար անհրաժեշտ է համապատասխան խորհրդակցական և ռազմավարական որոշումներ ընդունող կառույց.
- համակարգի նոր կառույցների ստեղծումը և գոյություն ունեցող կառույցների փուլային եղանակով արդիականացումը:

2. ԵՄ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ. ՍԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ա) Եվրոպական փորձ

Գրեթե բոլոր ԵՄ նոր անդամ երկրներում կառավարություններին կից ստեղծվել էին խորհրդակցական կամ նախնական որոշումներ ընդունող մարմիններ, ինչպիսիք են. *ԵՄ ինտեգրման խորհուրդները* կամ *ԵՄ ինտեգրման կոմիտեներ*, որոնք կառավարություններին աջակցում էին ԵՄ ինտեգրման ամբողջ գործընթացի կառավարման, համակարգման և վերահսկման գործում: Շատ դեպքերում այդ գործառույթների կազմակերպական և նախապատրաստական բաղկացուցիչները վերապահվում էին նշված մարմիններին: Այս կառույցների ստեղծումը պայմանավորված էր մի շարք գործոններով, մասնավորապես՝

1. կառավարման մարմինների հնարավորինս լայն ընդգրկման անհրաժեշտությամբ, քանի որ կառավարությունների կազմում հաճախ ընդգրկված չեն լինում ԵՄ ինտեգրման գործընթացների հետ առնչվող պետական կառավարման բոլոր մարմինները.
2. ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ որոշումների ընդունման ընթացքում բոլոր մարմինների դիրքորոշումներն արտահայտելու և ինտեգրման ընթացքում միջգերատեսչական հակասությունները հարթելու անհրաժեշտությամբ.
3. ընդունվող որոշումները պատշաճ կերպով նախապատրաստելու և հիմնավորելու անհրաժեշտությամբ:

Բացի այդ, ԵՄ նոր անդամ որոշ փոքր երկրներում (Էստոնիա, Լատվիա) ստեղծվել էին *Բարձրագույն քաղաքացիական ծառայողների խորհուրդներ,* որոնց կազմում ընդգրկված էին համապատասխան փոխնախարարներ և պետական կառավարման այլ մարմինների ներկայացուցիչներ: Նշված խորհուրդները կոչված էին ԵՄ ինտեգրման գործընթացի շրջանակներում աշխատանքային մակարդակով համակարգելու միջգերատեսչական աշխատանքները:

Չափազանց կարևոր է նաև օրենսդիր մարմնի ներգրավումը ԵՄ ինտեգրման գործընթացին: ԵՄ թեկնածու երկրների խորհրդարաններում ստեղծվել են ԵՄ ինտեգրման հանձնաժողովներ: Նշված հանձնաժողովներն ակտիվորեն մասնակցում էին խորհրդարաններում իրականացվող ԵՄ ինտեգրմանն ուղղված աշխատանքներին: Օրենսդրի ներկայացուցիչները մասնակցում էին նաև ինտեգրման խորհուրդների աշխատանքներին:

ԵՄ ինտեգրման գործընթացի համակարգման համար պատասխանատու կարևորագույն աշխատանքային մարմիններ են ԵՄ նոր անդամ և թեկնածու երկրների կառավարությունների՝ *ԵՄ ինտեգրման վարչությունները*, *ԵՄ ինտեգրման գործակալությունները* կամ *ԵՄ ինտեգրման քարտուղարությունները*: Որպես կանոն՝ դրանք ստեղծվել են վարչապետի կամ կառավարության աշխատակազմի կառուցվածքում և ենթարկվել կամ ենթարկվում են անմիջապես վարչապետին (Էստոնիա), վարչապետի համապատասխան տեղակալին (Բուլղարիա) կամ եվրաինտեգրման համար պատասխանատու առանց պորտֆելի նախարարին (Սլովենիա): Հարկ է նշել, որ որոշ երկրներում այդ նպատակով ստեղծվել են առանձին նախարարություններ (Ռումինիա):

Տարբեր անվանումներով և տարբեր կարգավիճակներով հանդերձ՝ այս կառուցվածքային ստորաբաժանումները հիմնականում իրականացրել են նմանատիպ գործառույթներ, ներառյալ՝ ինտեգրման ազգային ծրագրերի մշակման և իրականացման համակարգումը, ինչպես նաև Եվրոպական Միության հետ համաձայնեցված՝ գործողությունների տարեկան ծրագրերի և այլ ինտեգրացիոն փաստաթղթերի նախապատրաստման և կիրարկման համակարգումը:

բ) Հայաստանի ներկա իրավիճակը

Ներկայումս Հայաստանում եվրաինտեգրման կառավարման համակարգը դեռ ամբողջ ծավալով ձևավորված չէ, սակայն առկա են առանձին օղակներ, որոնք կարող են համարվել այդ համակարգի ձևավորման կորիզը: Դրանք են՝

1. Ազգային ծրագրի մշակման աշխատանքների համակարգման հանձնաժողովը և վերջինիս կառուցվածքի մեջ մտնող համակարգման աշխատանքային խումբը, որը

համակարգում և վերահսկում է ԳՀՀ-ի իրականացման Ազգային ծրագրի մշակման աշխատանքները.

2. եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերով ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի խնդիրներն են Եվրոպական կառույցներին ՀՀ ինտեգրման գործընթացի, անդամակցության հետևանքով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի և Եվրոպական չափանիշներին ազգային օրենսդրության ներդաշնակեցման խնդիրների ուսումնասիրությունը, այդ հարցերին առնչվող օրենսդրական նախաձեռնությունների քննարկումը և Ազգային ժողով եզրակացությունների ներկայացումը.
3. ՀՀ արտաքին գործերի և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություններում ԵՄ հարցերով զբաղվող ստորաբաժանումները: Մասնավորապես, ՀՀ արտաքին գործերի նախարարության ԵՄ հարցերով զբաղվող ստորաբաժանումը մշակում և իրականացնում է ԵՄ-ի հետ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, իսկ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ԵՄ հարցերով զբաղվող ստորաբաժանումը իր լիազորությունների սահմաններում կազմակերպում է համագործակցությունը ԵՄ կառույցների հետ.
4. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում միջազգային կազմակերպությունների և պաշտոնական օժանդակության խնդիրներով զբաղվող ստորաբաժանումները, որոնք իրականացնում են Հայաստանի Հանրապետությանն ուղղվող արտերկրյա ֆինանսական օժանդակության համակարգումը և ներդաշնակեցումը:

Ի լրումն վերոհիշյալի՝ հարկ է նշել նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի 2005 թվականի մայիսի 1-ի թիվ ՆԿ-100-Ա կարգադրությամբ ստեղծված Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական աշխատանքային խումբը, որը համակարգում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարը:

գ) Հայաստան. կազմակերպական կառուցվածք, կառույցները և գործառույթները

Սույն փաստաթղթում ներկայացված կառույցների անվանումները համալրված են հապավումներով, որոնք նկարագրում են տվյալ կառույցի ընդհանուր ուղղվածությունը: Յուրաքանչյուր գործառույթի վերջում փակագծերում նշված է այդ գործառույթի թեմատիկան:

- (ԸՀ) – ընդհանուր համակարգում
- (Հ) – համակարգում
- (Կ) – կատարում

<u>ՀՀ կառավարություն (ԸՀ)</u>

ՀՀ կառավարությունը ստանձնելու է ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման ընդհանուր կառավարումը, մասնավորապես, ԵՄ ինտեգրմանն առնչվող որոշումների ու համապատասխան փաստաթղթերի ընդունումը, անհրաժեշտության դեպքում դրանց ներկայացումը Ազգային ժողովում, ինչպես նաև ամբողջ գործընթացի ղեկավարումն ու համակարգումը: ԵՄ ինտեգրման գործընթացի շրջանակներում ՀՀ կառավարությունը իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ ընդհանուր որոշումների ընդունում՝ ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի կողմից սահմանված կարգով ներկայացմամբ (որոշումների ընդունում).
2. ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ ընդհանուր փաստաթղթերի (Ազգային ծրագիր, տարեկան հաշվետվություններ և այլն) հաստատում՝ ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ներկայացմամբ (որոշումների ընդունում).
3. ՀՀ օրենսդրության համապատասխանեցման գործընթացի իրականացում, մասնավորապես, Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնությունների

իրականացում, համապատասխան որոշումների ընդունում, իրավասու մարմիններին որոշումների ընդունման առաջարկությունների ներկայացում (իրականացում).

4. ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների ժամանակացույցի, ընթացքի և քննարկվելիք հարցերի հաստատում՝ ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ներկայացմամբ (որոշումների ընդունում).
5. ԵՄ օրենսդրության հետ համապատասխանեցված ՀՀ օրենսդրության կիրարկման համակարգում (համակարգում, իրականացում).
6. Ինտեգրման ծրագրերի (ներառյալ՝ Ազգային ծրագրերի և Եվրամիության հետ հանձնայնեցված գործողությունների ծրագրերի) իրականացման մոնիտորինգի և արդյունքների գնահատման համար համապատասխան չափորոշիչների հաստատում՝ ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ներկայացմամբ (որոշումների ընդունում):

Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերով ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողով (Հ, Կ)

ԵՄ ինտեգրման գործընթացում կարևորվում է օրենսդիր մարմնի մասնակցությունը: Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերով ՀՀ Ազգային Ժողովի հանձնաժողովը կարող է իրականացնել այս գործառույթը: Բացի այդ, ԵՄ ինտեգրման գործընթացում Ազգային ժողովի ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով նպատակահարմար է, որ հանձնաժովի նախագահը կամ փոխնախագահը հանդիսանա ԵՄ ինտեգրման խորհրդի և ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի անդամ: ԵՄ ինտեգրման գործընթացում քաղաքական կուսակցությունների (այդ թվում՝ ընդդիմադիր) մասնակցությունն ապահովելու նպատակով նպատակահարմար է հանձնաժողովում ընդգրկել Ազգային ժողովում ներկայացված բոլոր կուսակցությունների և խմբակցությունների ներկայացուցիչներին:

Բացի այդ, Ազգային ժողովի աշխատակազմում նպատակահարմար է ստեղծել ԵՄ ինտեգրման հանձնաժողովին աջակցող ստորաբաժանում, որը պետք է կոչված լինի ապահովելու ԵՄ ինտեգրման հանձնաժողովի բնականոն աշխատանքների ընթացքը: Թիմը պետք է նախապատրաստի աշխատանքային փաստաթղթերը, կազմի հանձնաժողովի նիստերի և հանդիպումների արձանագրությունները և իրականացնի այլ կազմակերպչական աշխատանքներ, ինչպես նաև տրամադրի տեղեկատվություն ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին:

ԵՄ ինտեգրման գործընթացի շրջանակներում նպատակահարմար է, որ հանձնաժողովը `

1. աջակցի ԵՄ օրենսդրության հետ ՀՀ օրենսդրության համապատասխանեցման ծրագրային աշխատանքներին՝ կառավարության և պրոֆիլային մշտական հանձնաժողովի հետ մեկտեղ մասնակցելով համապատասխան օրենքների և որոշումների ընդունման և փոփոխման գործընթացին (որոշումների ընդունում, իրականացում).
2. մասնակցի ԵՄ ինտեգրման խորհրդի և համակարգող հանձնաժողովի աշխատանքներին (համակարգում, վերահսկում).
3. տեղեկատվություն տրամադրի ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին (իրականացում, հաղորդակցում).
4. ապահովի ԵՄ ինտեգրման գործընթացին վերաբերվող տեղեկատվության փոխանակումը ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության հետ:

ԵՄ ինտեգրման ազգային խորհուրդ (ԸՀ)

ԵՄ ինտեգրման գործընթացում խիստ կարևորվում է հասարակության շահագրգիռ հատվածների ներգրավումը այս գործընթացում, ինչպես նաև նրանց դիրքորոշումներին արձագանքման մեխանիզմների ստեղծումը:

ԵՄ ինտեգրման ազգային խորհուրդը ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման ընթացքում կհանդիսանա մի մարմին, որի հիմնական առաքելությունը կլինի պետական կառավարման ապարատի և լայն հասարակության միջև երկկողմանի կապի ապահովումը: Այս նպատակով ԵՄ ինտեգրման ազգային խորհրդում ներգրավված կլինեն պետական կառավարման

համակարգի բոլոր գերատեսչությունների ներկայացուցիչները ղեկավարների մակարդակներով, Ազգային ժողովի ներկայացուցիչները, ինչպես նաև հասարակության շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները: ԵՄ ինտեգրման ազգային խորհուրդ (Խորհուրդը) կնախագահի ՀՀ վարչապետը: Բացի այդ, կնախատեսվի նաև Խորհրդի քարտուղարի պաշտոնը, որը կստանձնի ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության պետը: Խորհրդի նիստերը կգումարվեն տարեկան առնվազն մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում կգումարվեն նաև արտահերթ նիստեր: Կարևորվում է նաև Խորհրդի կողմից տեղեկատվության տրամադրումը լայն հասարակությանը, ինչը պետք է իրականացվի ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնի միջոցով:

ԵՄ ինտեգրման ազգային խորհրդի հիմնական նպատակներն են՝

1. ապահովել ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ հանրապետական գործադիր և այլ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների միջև երկխոսությունը (հաղորդակցություն).
2. ապահովել քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների՝ ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ դիրքորոշումների քննարկումը (հաղորդակցություն).
3. խթանել պետության և հասարակության միջև ԵՄ ինտեգրման գործընթացի շուրջ քննարկումների կազմակերպումն ու համակարգումը (հաղորդակցություն):

ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողով (ԸՀ)

ԵՄ ինտեգրման գործընթացի հիմնական համակարգող մարմին կհանդիսանա ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովը (Հանձնաժողովը), որը կստեղծվի ԳՀՀ իրականացման Ազգային ծրագրի մշակման աշխատանքների համակարգման հանձնաժողովի հիման վրա: Հանձնաժողովի հիմնական առաքելությունը կլինի ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման ընթացքում ծառայելու որպես քաղաքականության և ռազմավարության ուղղությունները որոշակիացնող մարմին:

Հանձնաժողովն իր սահմանած կարգով կքննարկի նաև ինտեգրման ծրագրային փաստաթղթերի մշակման և (կամ) իրականացման ընթացքը, ներառյալ ազգային ծրագրերը և գործողությունների ծրագրերը, ինչպես նաև ինտեգրման հետ առնչվող այլ հարցեր: ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած որոշումները պետք է ներկայացվեն Կառավարության քննարկմանը:

Հանձնաժողովում կներգրավվեն ՀՀ արդարադատության, արտաքին գործերի, առևտրի և տնտեսական զարգացման, ֆինանսների և էկոնոմիկայի, գյուղատնտեսության, բնապահպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարները, ինչպես նաև Ազգային ժողովի փոխնախագահը: Հանձնաժողովը կնախագահի ՀՀ վարչապետը: Այն իրավունք կունենա իր նիստերին հրավիրելու քննարկվելիք հարցերին առնչվող պետական մարմինների ներկայացուցիչներին, որոնք կմասնակցեն նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով: Հանձնաժողովի նիստերը կգումարվեն առնվազն եռամսյակը մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում կգումարվեն նաև արտահերթ նիստեր:

Նախատեսվում է նաև հանձնաժողովի քարտուղարի պաշտոնը, որը կստանձնի ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության պետը:

ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի հիմնական գործառույթները կլինեն՝

1. ԵՄ ինտեգրման հետ կապված ռազմավարական որոշումների քննարկումը և դրանց ներկայացումը կառավարության ընդունմանը (որոշումների ընդունում, նախաձեռնում).
2. ԵՄ ինտեգրման հետ կապված հիմնական փաստաթղթերի քննարկումը և դրանց ներկայացումը կառավարության ընդունմանը (իրականացում).
3. ԵՄ ինտեգրման գործընթացի աշխատանքների ընդհանուր համակարգումը (համակարգում).
4. ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման աշխատանքների կատարման ընդհանուր վերահսկումը (վերահսկում).

5. ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման աշխատանքների կատարման ընթացքի քննարկումը և դրա վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկությունների ներկայացում.
6. Տեղեկատվության տրամադրումը լայն հասարակությանը ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնի միջոցով (հաղորդակցում):

Հարկ է նշել, որ ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովը ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվելու է մինչև 2006 թվականի մարտի 31-ը:

Կառուցվածքային առումով Հանձնաժողովի ներքո կստեղծվի *Համակարգող աշխատանքային խումբը*, որը կիրականացնի ԵՄ ինտեգրման գործընթացի համակարգումը աշխատանքային մակարդակով: Համակարգող աշխատանքային խումբը հիմնականում գործելու է որպես ընթացիկ կազմակերպչական հարցերի և միջգերատեսչական հակասությունների ու շահերի կարգավորման մարմին: Համակարգող աշխատանքային խմբում ներգրավված պետք է լինեն ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովում ներգրավված պետական մարմինների ղեկավարների տեղակալները, ինչպես նաև ԵՄ ինտեգրման վարչության պետը: Համակարգող աշխատանքային խմբի ղեկավարին նշանակում է համակարգող հանձնաժողովի նախագահը:

Համակարգող աշխատանքային խումբը թեմատիկ խմբերի կանոնադրությունները նախնական հավանության արժանացնելուց հետո պետք է փոխանցի համակարգող հանձնաժողովի հաստատմանը: Աշխատանքային խումբը կհամակարգի նաև այս թեմատիկ խմբերի աշխատանքները: Նշված խմբերը պետք է զբաղվեն միջգերատեսչական բնույթ կրող կոնկրետ ճյուղային խնդիրներով: Համակարգող աշխատանքային խմբի հիմնական գործառույթներն են լինելու՝

1. ԵՄ ինտեգրման գործընթացի շրջանակներում պետական կառավարման և կարգավորող մարմինների կատարած աշխատանքների աշխատանքային կարգով համակարգումը (համակարգում).
2. ԵՄ ինտեգրման գործընթացի շրջանակներում ընթացիկ հարցերի քննարկումն ու առաջարկությունների ներկայացումը ՀՀ կառավարության հաստատմանը (նախաձեռնում, որոշումների ընդունում).
3. ըստ պահանջի՝ ԵՄ ինտեգրման ազգային խորհրդին կամ Համակարգող հանձնաժողովին տեղեկությունների, պարզաբանումների և խորհրդատվության տրամադրումը (իրականացում):

ՀՀ վարչապետ (ԸՀ)

ԵՄ ինտեգրման գործընթացը ոչ միայն երկարաժամկետ ու բարդ է, այլև բազմաբնույթ: Այդ իսկ պատճառով այն անհրաժեշտ է համակարգել ու առաջնորդել հնարավորին բարձր մակարդակով և օպերատիվ ռեժիմով: Նշված գործառույթի պատշաճ կերպով իրականացումն ապահովելու նպատակով *ԵՄ ինտեգրման գործընթացը կառաջնորդվի ՀՀ վարչապետի կողմից:* Նշված լիազորությունների ստանձնում ՀՀ վարչապետի կողմից կենթադրի նաև կառավարության աշխատակազմում ԵՄ ինտեգրման վարչության ստեղծումը: Վարչության աշխատանքները պետք է վերահսկի և ուղղորդի ՀՀ վարչապետը կամ իր կողմից պաշտոնապես նշանակված պաշտոնատար անձ:

ՀՀ վարչապետի կողմից ԵՄ ինտեգրման գործընթացի համակարգման և կառավարման դերի ստանձնումը հիմնականում պայմանավորված է.

- ինտեգրման գործընթացի պատասխանատվության ՀՀ վարչապետի կողմից ստանձնումը պայմանավորված է գործընթացի երկարաժամկետ, բազմաբովանդակ և միջգերատեսչական բնույթով, ինչպես նաև աշխատանքների հսկայական ծավալներով, ինչը թույլ չի տալիս ինտեգրման համար պատասխանատվություն նախատեսել որևէ այլ նախարարի համար՝ համատեղելով ինտեգրման գործընթացները այլ խնդիրների հետ: Պետք է նշել, որ

գործընթացի ընդհանուր կառավարման այսպիսի մոտեցումը բնորոշ է մի շարք ԵՄ նոր անդամ և թեկնածու երկրներին[1]:

Իր գործունեության ընթացքում ՀՀ վարչապետին օժանդակելու է կառավարության աշխատակազմում ստեղծվելիք ԵՄ ինտեգրման վարչությունը: Վարչապետը պատասխանատու է լինելու հետևյալ գործառույթների համար.

1. ԵՄ ինտեգրման գործընթացում ներգրավված մարմինների, ինտեգրման հետ առնչվող աշխատանքների համակարգում (համակարգում).
2. ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցային գործընթացի համակարգում(համակարգում).
3. ԵՄ ինտեգրման ազգային խորհրդի և համակարգող հանձնաժողովի նախագահի պարտականությունների կատարում (համակարգում, որոշումների ընդունում).

ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչություն (Հ, Կ)

ԵՄ ինտեգրման գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել այնպիսի կառույց, որն ամենօրյա աշխատանքային մակարդակով կուղղորդի այդ գործընթացը: Այդպիսի աշխատանքային կառույց է հանդիսանալու ՀՀ կառավարության աշխատակազմում մինչև 2006 թվականի մարտի 31-ը ստեղծվելիք *ԵՄ ինտեգրման վարչությունը*: Ընդ որում, ՀՀ վարչապետը կամ իր կողմից նշանակված պաշտոնատար անձը համակարգելու է վարչության աշխատանքները:

Ելնելով աշխատանքների բնույթից՝ վարչությունը բաղկացած է լինելու *Պլանավորման, մոնիտորինգի և վերլուծությունների բաժնից*, *ԵՄ օրենսդրական և ինստիտուցիոնալ համապատասխանեցման բաժնից* և *ԵՄ փաստաթղթավորման կենտրոնից*:

Վարչությունն իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. ԵՄ ինտեգրման գործընթացում ներգրավված պետական կառավարման և կարգավորող մարմինների կողմից իրականացվող աշխատանքների ընթացիկ մոնիտորինգ (վերահսկում).
2. հիմք ընդունելով Ազգային ծրագիրն ու տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև հաշվի առնելով ԵՄ - Հայաստան ընթացիկ հարաբերությունները՝ Ազգային ծրագրի և այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքների համակարգում (համակարգում).
3. Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման, ինչպես նաև ԵՄ ինտեգրման գործընթացներում ներգրավված մարմինների կողմից կատարած այլ աշխատանքների համակարգում (համակարգում).
4. ԵՄ ինտեգրման, Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման գործընթացի կատարման ժամանակացույցի ապահովման հետ կապված վերահսկում և անհրաժեշտ աշխատանքների իրականացում (իրականացում).
5. Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մոնիտորինգի, իրականացման արդյունքների գնահատման համար համապատասխան չափորոշիչների համակարգի մշակման և ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովին ներկայացման աշխատանքների համակարգում, անհրաժեշտ գործառույթների իրականացում (համակարգում, նախաձեռնում).
6. Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման մոնիտորինգի համար համապատասխան հաշվետվությունների, վիճակագրական տվյալների մշակման և ներկայացման, ձևաչափերի, ընթացակարգի մշակման և ներդրման հետ կապված աշխատանքների համակարգում, Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մոնիտորինգի աշխատանքների համակարգում (համակարգում).

---

[1] ԵՄ նոր անդամ երկրներից առանձնանում է Էստոնիայի փորձը, որտեղ ինտեգրման աշխատանքներն անմիջապես համակարգել է վարչապետը, իսկ դրանց իրականացման կառավարումը կատարել է կառավարության աշխատակազմի Եվրոպական ինտեգրման քարտուղարությունը:

7. տեխնիկական աջակցության շրջանակներում Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման մոնիտորինգի անցկացման նպատակով պահանջվող ուսումնասիրությունների կազմակերպում և համակարգում (նախաձեռնում, համակարգում).
8. ԵՄ իրավական ակտերի հետ ՀՀ նորմատիվ իրավական ակտերի շարունակական համեմատական վերլուծության իրականացում, ներառյալ՝ 01.01.2005 թվականից հետո ընդունված ԵՄ նոր իրավական ակտերի համեմատական վերլուծությունն այդ պահին գործող ՀՀ նորմատիվ իրավական ակտերի հետ, ինչպես նաև 01.01.2005 թվականից հետո ընդունված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի համեմատությունը այդ պահին գործող ԵՄ իրավական ակտերի հետ (իրականացում).
9. Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի շրջանակներում մշակվող ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ԵՄ համապատասխան իրավական ակտի հետ համապատասխանության պարտադիր փորձաքննության կազմակերպում, փորձաքննական աշխատանքների համակարգում: Ընդ որում, նպատակահարմար է սահմանել, որ առանց համապատասխանության վերաբերյալ դրական կարծիքի, տվյալ օրենսդրական ակտը չի կարող ընդունվել (այն ուղարկվում է լրամշակման) (համակարգում, նախաձեռնում, իրականացում).
10. Ազգային և գործողությունների ծրագրերի շրջանակներից դուրս մշակվող ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ԵՄ համապատասխան իրավական ակտի հետ համապատասխանության պարտադիր փորձաքննության կազմակերպում, փորձաքննական աշխատանքների համակարգում (առանց դրական կարծիքի տվյալ օրենսդրական ակտը կարող է ընդունվել) (համակարգում, նախաձեռնում, իրականացում).
11. ԵՄ ինտեգրման գործընթացին վերաբերող բոլոր փաստաթղթերի հավաքում և արխիվացում (իրականացում).
12. ԳՀՀ իրականացման Ազգային ծրագրով սահմանված ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ շահագրգիռ գերատեսչությունների կողմից կարծիքների ուղարկման, հավաքագրման, ամփոփման և ներկայացման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացում.
13. ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների ժամանակացույցի, ընթացքի և քննարկվելիք հարցերի պլանավորման և ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովին ներկայացման աշխատանքների համակարգում և համապատասխան գործառույթների իրականացում (պլանավորում, համակարգում, նախաձեռնում, իրականացում).
14. ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների նախապատրաստական աշխատանքների համակարգում (համակարգում).
15. ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների իրականացում, որտեղ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը կստանձնի առաջնային դերը (իրականացում).
16. ապահովի ԵՄ ինտեգրման գործընթացին վերաբերվող տեղեկատվության փոխանակումը ՀՀ ԱԺ Եվրոպական կառույցներին ինտեգրման հանձնաժողովի հետ:
17. տեղեկատվության տրամադրում ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին (հաղորդակցում).
18. ԵՄ ինտեգրման ազգային խորհրդի քարտուղարի պարտականությունների կատարում /ԵՄ ինտեգրման վարչության պետ/ (իրականացում).
19. ԵՄ ինտեգրման խորհրդի համակարգող աշխատանքային խմբի նախագահի պարտականությունների կատարում /ԵՄ ինտեգրման վարչության պետ/ (համակարգում, որոշումների ընդունում).հանել

3. ԵՄ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ա) Եվրոպական փորձ

ԵՄ ինտեգրման գործընթացի էությունը ԵՄ արժեքների, քաղաքականության և ինստիտուտների որդեգրումն է, ինչն իրականացվում է ԵՄ գործող օրենսդրության հետ տվյալ երկրի օրենսդրության համապատասխանեցման և այդ օրենսդրության հետևողական կիրարկման միջոցով: ԵՄ նոր անդամ և թեկնածու երկրներում այս գործառույթն իրականացրել են պետական կառավարման ճյուղային և գործառութային մարմինները, որտեղ ստեղծվել են համապատասխան կառուցվածքային մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնք ներգերատեսչական մակարդակով պատասխանատու էին տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության համապատասխանեցման գործընթացի համար:

ԵՄ գործող իրավական ակտերի առկայությունը ազգային լեզվով ապահովելու նպատակով գրեթե բոլոր թեկնածու երկրներում ստեղծվել էին հատուկ *Թարգմանչական կենտրոններ կամ ծառայություններ,* որոնց հիմնական խնդիրն էր ազգային ծրագրերով սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ԵՄ գործող, այնպես էլ ազգային իրավական ակտերի թարգմանությունը: ԵՄ թեկնածության պահանջներից մեկը թեկնածության պահին ԵՄ գործող իրավական ակտերի ազգային լեզվով թարգմանված լինելն է:

բ) Հայաստանի ներկա իրավիճակը

ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրության համապատասխանեցման գործընթացն առնչվում է սոցիալ-տնտեսական կյանքի և պետական կառավարման գրեթե բոլոր ոլորտներին: Այդ իսկ պատճառով, արդյունավետություն ապահովելու և հաջողություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է այս գործընթացում ներգրավել շահագրգիռ բոլոր պետական կառավարման և կարգավորող մարմիններին, ինչպես նաև Ազգային ժողովին:

Այդ առումով գործընթացի իրականացման համար կօգտագործվեն վերը նշված մարմիններում առկա կարողությունները, որոնք պետք է հզորացվեն և անհրաժեշտության դեպքում վերակազմավորվեն:

գ) Հայաստան. կազմակերպական կառուցվածքը, կառուցները և գործառույթները

<u>Պետական կառավարման և կարգավորող մարմինների աշխատակազմերի ԵՄ ինտեգրման ստորաբաժանումները (Կ)</u>

ԵՄ ինտեգրման ընթացքում գրեթե յուրաքանչյուր պետական կառավարման կամ կարգավորող մարմին առնչվելու է ինտեգրման հարցերին: ԵՄ օրենսդրության հետ ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը պետք է իրականացնեն ճյուղային գերատեսչությունները:

Պետական կառավարման և կարգավորող մարմինները ներկայումս համագործակցում են բազմաթիվ միջազգային կազմակերպությունների հետ և ենթադրվում է, որ ինտեգրման ընթացքում ավելի սերտորեն են համագործակցելու ԵՄ կառույցների հետ: Բացի այդ, այս գերատեսչությունները հանդիսանալու են Եվրամիության կողմից տրամադրվելիք ԵՄ ինտեգրման գործընթացին ուղղված աջակցության շահառուները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նպատակով այս բոլոր գործառույթները կենտրոնացվելու են մեկ կառուցվածքային ստորաբաժանման պատասխանատվության ներքո: Այդ նպատակով համապատասխան գերատեսչություններում ստեղծվելու են *<u>ԵՄ ինտեգրման վարչություններ</u>* կամ *<u>ԵՄ ինտեգրման բաժիններ</u>* (ստորաբաժանում), կամ կնշանակվեն համապատասխան պատասխանատուներ: Ստորաբաժանման ստեղծումը կպայմանավորվի տվյալ գերատեսչության կողմից իրականացվելիք աշխատանքների ծավալներով և խորությամբ:

Կառուցվածքային առումով ստորաբաժանումն իր կազմում ընդգրկելու է *<u>ԵՄ օրենսդրական և ինստիտուցիոնալ համապատասխանեցման ստորաբաժանումը</u>* և ըստ պահանջի՝ այլ ենթակառուցվածքային ստորաբաժանում(ներ): Նշված ստորաբաժանումների հիմնումը կամ վերակազմավորումը իրականացվելու է փուլային եղանակով՝ հիմնվելով սույն ծրագրի դրույթների իրականացման առաջնայնության վրա (տե՛ս Հավելված 2):

Ստորաբաժանումն իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. ԵՄ օրենսդրության հետ ՀՀ օրենսդրության համապատասխանեցում՝ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ (իրականացում).
2. համագործակցելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մոնիտորինգի և իրականացման արդյունքների գնահատման համար համապատասխան ճյուղային չափորոշիչների համակարգի մշակում և թարմացում (իրականացում).
3. համագործակցելով ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության հետ, ԵՄ օրենսդրության հետ՝ ՀՀ օրենսդրության շարունակական համեմատության անցկացում (իրականացում).
4. տվյալ գերատեսչությանը վերապահված ոլորտներում Ազգային ծրագրի և այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներին մասնակցություն (իրականացում).
5. ԵՄ համապատասխան կառույցների և այլ միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքային հարաբերությունների ստեղծում և զարգացում (իրականացում).
6. տվյալ գերատեսչությանը վերապահված ոլորտներում, ԵՄ և այլ միջազգային կազմակերպությունների ծրագրերին աջակցում (իրականացում).
7. ԵՄ ինտեգրման գործընթացին ուղղվող ոլորտային ծրագրերի նախագծերի մշակում (իրականացում).
8. ԳՀՀ իրականացման Ազգային ծրագրով սահմանված ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ուղարկման նախաձեռնումը հասարակական կազմակերպություններին, միություններին, հիմնադրամներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև քաղաքացիներին կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների այդ կազմակերպություններից կարծիքների հավաքում ու ամփոփում և ուղարկում ՀՀ իրավական ակտի մշակումը նախաձեռնող կառույցին (նախաձեռնում, իրականացում, հաղորդակցում).
9. Հասարակական կազմակերպությունների, միությունների, և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկումների կազմակերպում (իրականացում, հաղորդակցում).
10. տեղեկատվության տրամադրում ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին (հաղորդակցում):

ԵՄ ինտեգրման բաժիններն իրականացնելու են վերոհիշյալ գրեթե բոլոր գործառույթները, սակայն աշխատանքների ավելի փոքր ծավալներով: Ընդ որում, որոշ մարմիններում կարող են ստորաբաժանումների ստեղծման փոխարեն նշանակվել ԵՄ ինտեգրման համար պատասխանատու աշխատակիցներ:

<u>ՀՀ արդարադատության նախարարություն (Հ, Կ)</u>

ԵՄ ինտեգրման գործընթացում ՀՀ արդարադատության նախարարությունը պատասխանատու է լինելու «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթների իրականացման համար: Բացի այդ, նախարարության ենթակայության ներքո ստեղծվելու է *<u>Իրավական թարգմանչական կենտրոնը</u>*:

ԵՄ ինտեգրման գործընթացի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարությունն իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. Իրավական թարգմանչական կենտրոնի աշխատանքների համակարգում և վերահսկում (համակարգում, վերահսկում).
2. հայերենով թարգմանված ԵՄ իրավական ակտերի պաշտոնական թարգմանության վավերացում (իրականացում).
3. ԵՄ իրավական ակտերին համապատասխանեցված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի անգլերենով թարգմանված տարբերակների պաշտոնական թարգմանության վավերացում (իրականացում).

4. ԵՄ իրավական ակտերին համապատասխան ընդունված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի առանձնացված ռեգիստրի (այդ թվում՝ համակարգչային) վարում և պահպանում (իրականացում):

Իրավական թարգմանչական կենտրոն (կ)

ԵՄ օրենսդրության հետ ՀՀ օրենսդրության համապատասխանեցման գործընթացում կարևորվում է ԵՄ գործող իրավական ակտերի մատչելիությունը հասարակության համար, այսինքն՝ դրանց առկայությունը հայերենով: Թեկնածու երկրների համար ԵՄ օրենսդրության ազգային լեզվով պաշտոնական թարգմանության առկայությունը ԵՄ անդամության պարտադիր նախապայման է: Կարևորվում է նաև ԵՄ օրենսդրության հետ համապատասխանեցված ՀՀ օրենսդրության անգլերենով առկայությունը, ինչը ՀՀ նորմատիվ իրավական ակտերը մատչելի կդարձնի եվրոպական կողմի համար:

Նշված խնդրի լուծման նպատակով ստեղծվելու է *Իրավական թարգմանչական կենտրոն*: Կենտրոնն ունենալու է պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձև, իսկ լիազոր մարմին է նշանակվելու ՀՀ արդարադատության նախարարությունը:

Որակյալ թարգմանություն ապահովելու նպատակով Կենտրոնում ընդգրկվելու են թարգմանիչներ, եզրաբաններ, խմբագիրներ և իրավաբաններ: Իր գործունեության ընթացքում Կենտրոնը սերտորեն համագործակցելու է ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության և այլ պետական կառավարման և կարգավորող մարմինների հետ:

Կենտրոնն իր աշխատանքային ծրագրով սահմանված ժամկետներում իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. Ազգային ծրագրով սահմանված ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրության համապատասխանեցման ժամանակացույցին համաձայն՝ ԵՄ իրավական ակտերի թարգմանումը հայերենով (իրականացում).
2. ԵՄ իրավական ակտերի հետ համապատասխանեցված, ինչպես նաև իր աշխատանքային ծրագրով նախատեսված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի թարգմանումը անգլերենով (իրականացում).
3. Եզրաբանական բառարանների մշակումը, եզրաբանական շտեմարան(ներ)ի ստեղծումը, թարմացումը, զարգացումը և պահպանումը, ինչպես նաև դրանց հանրամատչելիության ապահովումը.
4. Համաձայն ներկայացված պահանջների՝ այլ կազմակերպությունների կողմից թարգմանված Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա իրավական ակտերի լեզվական և թարգմանչական փորձաքննություն.
5. Պետական կառավարման և կարգավորող մարմինների կողմից ներկայացված պահանջների հիման վրա այլ իրավական ակտերի թարգմանումը հայերեն լեզվով:

4. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ա) Եվրոպական փորձ

ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացումը հիմնված է պետական մարմինների բարձրակարգ մասնագետների աշխատանքի վրա: Այս առումով կարևոր է պետական համակարգում ընդգրկված մասնագետների վերապատրաստումների կազմակերպման և իրականացման հետ կապված խնդիրը: Որոշ երկրներում (օրինակ՝ Կիպրոսում) ստեղծվել են Եվրոպական համալսարաններ, որոնք պատրաստում են բարձրակարգ մասնագետներ: Այլ երկրներում այս վերապատրաստումներն իրականացնում էին քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համար պատասխանատու ուսումնական հաստատությունները կամ վերապատրաստող մասնագիտացված կենտրոնները: Ընդհանուր առմամբ էական չէ, թե որ կրթական հաստատությունն է իրականացնում վերապատրաստումները: Կարևոր է, որ վերապատրաստումները հիմնված լինեն առկա պահանջարկի վրա և լինեն արդյունավետ:

բ) Հայաստանի ներկա իրավիճակը

Հայաստանում քաղաքացիական ծառայության համակարգի կառավարումն իրականացնում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, որը պատասխանատու է քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերի հաստատման, թափուր հաստիքների համալրման, մրցույթների կազմակերպման և այլ գերատեսչությունների կողմից կազմակերպվող մրցույթների վերահսկման, քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների ուսումնական ծրագրերի հաստատման և վերապատրաստումների կազմակերպման համար:

ՀՀ պետական կառավարման ակադեմիան իրականացնում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստումները:

Այս ոլորտում անհրաժեշտ է ապահովել, որ ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման համար պատասխանատու մարմիններում ներգրավվեն միայն հատուկ պատրաստվածություն ունեցող մասնագետներ, որոնց առջև կդրվեն հստակ սահմանված պահանջներ և պարտականություններ: Անհրաժեշտ է նաև քաղաքացիական ծառայողների համար կազմակերպել ԵՄ չափանիշներին համապատասխանող վերապատրաստումներ:

գ) Ստեղծվելիք կազմակերպական կառուցվածքը

<u>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (կ)</u>

ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Որոշ մասնագետներ պետք է ներգրավվեն ստեղծվելիք կառույցներում, իսկ ոմանք արդեն իսկ աշխատում են քաղաքացիական ծառայության համակարգում: Անհրաժեշտ է, սակայն, հստակ սահմանել ստեղծվելիք կառույցներում ներգրավվող մասնագետներից պահանջվող որակավորումները և ունակությունները, ինչպես նաև որոշակիացնել համակարգում արդեն իսկ աշխատող մասնագետներին անհրաժեշտ վերապատրաստման կարիքները:

Նշված գործընթացը ղեկավարելու է *<u>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը</u>*, որը ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ներգրավված պետական կառավարման և կարգավորող մարմինների հետ համատեղ իրականացնելու է՝

1. ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի իրականացման գործընթացներում ներգրավվող մասնագետներին ներկայացվող գիտելիքների և ունակությունների պահանջների մշակումը (նախաձեռնում, իրականացում).
2. ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի իրականացման գործընթացներում ընդգրկված մասնագետների վերապատրաստման կարիքների ուսումնասիրումը (իրականացում).
3. ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի իրականացման գործընթացներում ընդգրկված մասնագետների՝ քաղաքացիական ծառայության հետ կապված փաստաթղթերի (քաղաքացիական ծառայողների անձնագրեր, մրցութային հարցաշարեր) մշակումը (իրականացում).
4. մրցույթների կազմակերպումը և իրականացման վերահսկումը (նախաձեռնում, իրականացում, վերահսկում).
5. տեղեկատվության տրամադրում ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին (հաղորդակցում):

Այս նպատակով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում առաջարկվում է ստեղծել *ԵՄ ինտեգրման ստորաբաժանում*, որն էլ կզբաղվի վերոհիշյալ խնդիրներով:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա և մասնագիտացված այլ ուսումնական հաստատություններ (Կ)

ԵՄ ինտեգրումը նոր գործընթաց է Հայաստանի համար, ուստի անհրաժեշտ կլինեն նոր որակավորմամբ պետական կառավարման ոլորտի մասնագետներ: Այս առումով շատ կարևոր է կազմակերպել համակարգում ընդգրկված մասնագետների վերապատրաստումներ, ինչպես նաև պատրաստել նոր մասնագետներ:

Հայաստանում *ՀՀ պետական կառավարման ակադեմիան* քաղաքացիական ծառայողների վերապատրաստման հիմնական մասնագիտացված կրթօջախն է: Ուստի, ԵՄ ինտեգրման գործընթացում ՀՀ պետական կառավարման ակադեմիան իրականացնելու է՝

1. Քաղաքացիական ծառայության խորհրդի ու պետական կառավարման և կարգավորող մարմինների հետ համատեղ ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի իրականացման գործընթացներում ներգրավված մասնագետներին ներկայացվող գիտելիքների և ունակությունների պահանջների մշակումը (իրականացում).
2. Քաղաքացիական ծառայության խորհրդի ու պետական կառավարման և կարգավորող մարմինների հետ համատեղ ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի իրականացման գործընթացներում ընդգրկված մասնագետների վերապատրաստման կարիքների ուսումնասիրությունը (իրականացում).
3. Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի իրականացման գործընթացների շուրջ ուսումնական ծրագրերի մշակումը (իրականացում).
4. պետական կառավարման համակարգի մասնագետների վերապատրաստումների կազմակերպումն ու իրականացումը (նախաձեռնում, իրականացում):

Բացի այդ, ԵՄ ինտեգրման գործընթացում ներգրավված մասնագետներին անհրաժեշտ կլինեն ավելի նեղ մասնագիտական վերապատրաստումներ: Դրանք կարող են իրականացնել պետական կառավարման մարմինների *մասնագիտացված վերապատրաստման կենտրոնները*, մասնավորապես, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ուսումնական կենտրոնը, ՀՀ արդարադատության նախարարության ուսումնական կենտրոնը, ՀՀ կենտրոնական բանկի ուսումնական կենտրոնը և այլն:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ

ա) Եվրոպական փորձ

ԵՄ նոր անդամ երկրները ԵՄ ինտեգրման գործընթացի խթանման նպատակով Եվրոպական Միությունից ստացել է մեծածավալ ֆինանսական օժանդակություն: Այս օժանդակության համակարգման նպատակով կառավարությունները նշանակել են Օգնության ազգային համակարգողներ, որոնք և ստանձնել են տրամադրվող օժանդակության համակարգման պատասխանատվությունը: Թեկնածու երկրներում այս պաշտոնը հիմնականում ստանձնում էին ֆինանսների նախարարները: Հարկ է նշել նաև, որ Օգնության ազգային համակարգողների նշանակումը Եվրոպական Միության պարտադիր պայմանն է:

Իրենց գործունեության ընթացքում Օգնության ազգային համակարգողներին օժանդակում էին իրենց ղեկավարած նախարարությունների համապատասխան ստորաբաժանումները: Այդ ստորաբաժանումները պատասխանատու էին օգնության համակարգման, ծրագրավորման և վերահսկման համար:

բ) Հայաստանի իրավիճակը

Հայաստանը մի շարք դոնոր կազմակերպությունների, պետությունների և, ինչը հատկանշական Հայաստանի համար, նաև հայկական սփյուռքի կողմից ստանում է ֆինանսական օժանդակություն: Նախատեսվում է, որ Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում Եվրոպական Միությունը Հայաստանին կտրամադրի ավելի մեծածավալ օգնություն: Անհրաժեշտ է ապահովել ԵՄ ինտեգրման գործընթացին տրամադրվելիք

օտարերկրյա օգնության և Հայաստանին տրամադրվող և տրամադրվելիք ամբողջ օգնության պատշաճ համակարգումը:

գ) Ստեղծվելիք կազմակերպական կառուցվածք

Օգնության ազգային համակարգող (Հ) և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ԵՄ և արտերկրյա օգնության համակարգման վարչություն (Հ, Կ)

ՀՀ Նախագահին առաջարկվելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին նշանակել Օգնության ազգային համակարգող, որը կստանձնի օտարերկրյա օգնության համակարգման ընդհանուր պատասխանատվությունը: Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը արդեն իսկ իրականացնում է օտարերկրյա օժանդակության համակարգումը, սակայն այս գործառույթն ավելի արդյունավետ իրականացնելու և ԵՄ-ի և այլ դոնոր երկրների ու կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցությունը ավելի նպատակային դարձնելու համար անհրաժեշտ են նոր հզորություններ և կարողություններ:

Վերոհիշյալ նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կազմում ստեղծվելու է *ԵՄ և օտարերկրյա օգնության համակարգման վարչություն*: Վարչությունը բաղկացած է լինելու երեք բաժիններից: Դրանք են՝ *ԵՄ օգնության համակարգման բաժին, Օտարերկրյա օգնության համակարգման բաժին* և *Սփյուռքի օգնության համակարգման բաժին*:

Վարչության հիմնական առաքելությունն է լինելու ԵՄ ինտեգրմանն ուղղվող, ինչպես նաև այլ դոնոր կազմակերպությունների, պետությունների և հայկական սփյուռքի կողմից տրամադրվող օժանդակության համակարգումը և ներդաշնակեցումը: Վարչության հիմնական գործառույթները նաև պետք է լինեն՝.

1. համագործակցելով ԵՄ ինտեգրման վարչության հետ՝ ԵՄ ինտեգրման գործընթացին ուղղվող ֆինանսական աջակցության ընդհանուր համակարգումը (համակարգում).
2. ԵՄ ինտեգրման գործընթացի համար պահանջվող ֆինանսական միջոցների ներգրավումը (նախաձեռնում, իրականացում).
3. ԵՄ ինտեգրման գործընթացին ուղղվող ֆինանսական աջակցության ծրագրավորումն ու համակարգումը (իրականացում, համակարգում).
4. աջակցություն տրամադրող կազմակերպությունների հետ համատեղ ԵՄ ինտեգրման, Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման գործընթացներին ուղղված ծրագրերի մշակումը (իրականացում).
5. ԵՄ ինտեգրման, Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման գործընթացներին ուղղված, տարբեր պետական գերատեսչությունների կողմից մշակվող ծրագրերի՝ ԵՄ ինտեգրման և Ազգային ծրագրի առաջնայնությունների հետ համապատասխանության պարտադիր փորձաքննությունը: Ընդ որում, նպատակահարմար է սահմանել, որ առանց դրական կարծիքի ծրագիրը չի հաստատվում (նախաձեռնում, իրականացում).
6. ԵՄ ինտեգրման, Ազգային ծրագրի և գործողությունների իրականացման գործընթացներին ուղղված ծրագրերի ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության ուսումնասիրությունը, վերլուծությունը և գնահատումը (իրականացում, վերահսկում).
7. ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ ֆինանսական աջակցության ներգրավման և ծրագրավորման շրջանակներում բանակցությունների վարումը և բանակցային գործընթացի համակարգումը (նախաձեռնում, իրականացում, համակարգում).
8. Հայաստանին ուղղվող ֆինանսական աջակցության տվյալների շտեմարանի ստեղծումը և տվյալների թարմացումը (իրականացում).
9. համագործակցելով ՀՀ արտաքին գործերի նախարարության Սփյուռքի հետ կապերի գործակալության հետ՝ սփյուռքի, օգնություն տրամադրող կազմակերպությունների և անհատների հետ աշխատանքային հարաբերությունների ստեղծումը և պահպանումը (իրականացում).
10. սփյուռքի օգնություն տրամադրող կազմակերպությունների և անհատների կողմից տրամադրվող օժանդակության համակարգումը (համակարգում).

11. տեղեկատվության տրամադրում ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին (հաղորդակցում):

6. ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ա) Եվրոպական փորձ

ԵՄ ինտեգրման անբաժանելի գործընթացներից է ստանձնած պարտականությունների կատարման ընթացքի շուրջ բանակցային գործընթացը: Այս նպատակով թեկնածու երկրների կառավարությունները նշանակել էին այսպես կոչված «Գլխավոր բանակցողներ», որոնք ստանձնել էին բանակցային գործընթացի իրականացման պատասխանատվությունը: Իրենց գործունեության ընթացքում Գլխավոր բանակցողներին օժանդակում էին Բանակցողների խումբը, Թեմատիկ խմբերը և Գլխավոր բանակցողի քարտուղարությունը: Հիմնականում Գլխավոր բանակցողներ են նշանակվել արտաքին գործերի նախարարները կամ նրանց տեղակալները:

բ) Հայաստանի իրավիճակը

Հայաստանում ներկայումս ԵՄ-ի հետ բանակցային գործընթացը տեղի է ունենում ԳՀՀ շրջանակներում գործող երկկողմանի մարմիններում՝ Համագործակցության խորհրդում, Կոմիտեում և ենթակոմիտեներում, որտեղ քննարկվում են Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական վիճակը, ներառյալ՝ ԳՀՀ շրջանակներում օրենսդրության համապատասխանեցման հարցերը: Հայաստանը Եվրոպական նոր հարևանության քաղաքականության մեջ ընդգրկելուց և հատկապես Ազգային և գործողությունների ծրագրերի ընդունումից հետո նախատեսվում է Հայաստանին եվրոպական կողմից ներկայացվող պահանջների հստակեցում և ստանձնած պարտավորությունների կատարման մոնիտորինգի նոր համակարգի ներդնում, ինչն ավելի մեծ պահանջներ է ներկայացնելու բանակցային գործընթացի և Հայաստանի ինտեգրման վերաբերյալ դիրքորոշման նկատմամբ:

գ) Ստեղծվելիք կազմակերպական կառուցվածքը

<u>Գլխավոր բանակցող (Հ, Կ) և ՀՀ արտաքին գործերի նախարարության ԵՄ ինտեգրման ստորաբաժանում (Կ)</u>

ԵՄ ինտեգրման գործընթացում կարևորվում է քաղաքական մակարդակով բանակցային գործընթացի պատշաճ իրականացումը և Հայաստանի հստակ դիրքորոշումը քաղաքական, տնտեսական և օրենսդրության համապատասխանեցման հարցերում: Այդ իսկ կապակցությամբ ՀՀ կառավարությունն առաջարկելու է ՀՀ Նախագահին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարին վերապահել Գլխավոր բանակցողի դերը, որն իր հերթին պատասխանատու է լինելու բանակցային գործընթացի իրականացման համար:

Գլխավոր բանակցողը իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. համագործակցելով ԵՄ ինտեգրման վարչության, ԵՄ ինտեգրման այլ համապատասխան կառույցների հետ՝ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների ժամանակացույցի, ընթացքի և քննարկվելիք հարցերի պլանավորման աշխատանքների իրականացման համակարգում (համակարգում).
2. համագործակցելով ԵՄ ինտեգրման վարչության, ԵՄ ինտեգրման այլ համապատասխան կառույցների հետ՝ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների նախապատրաստական աշխատանքների համակարգում (համակարգում).
3. ստանձնելով առաջնային դերը՝ ԵՄ ինտեգրման վարչության պետի հետ համատեղ ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների վարում (իրականացում):

Գլխավոր բանակցողին աջակցելու է ՀՀ արտաքին գործերի նախարարությունում ստեղծվելիք *<u>ԵՄ ինտեգրման ստորաբաժանումը</u>*:: Ստորաբաժանումը կարող է ստեղծվել նախարարությունում գործող ԵՄ բաժնի հիման վրա:

Ստորաբաժանումն իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. ԵՄ համապատասխան կառույցների հետ բանակցությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում (իրականացում).
2. ԵՄ համապատասխան կառույցների հետ պաշտոնական հարաբերությունների ստեղծում, ամրապնդում և պահպանում (իրականացում).
3. Հայաստանի Հանրապետության տարածքում բանակցությունների նախապատրաստում (իրականացում).
4. տեղեկատվության տրամադրում ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնին (հաղորդակցում):

Բացի այդ, ԵՄ ինտեգրման գործընթացում կարևորվում է *Եվրամիություն-ում Հայաստանի Հանրապետության պատվիրակության* (Պատվիրակություն) դերը: Կառավարությունն անհրաժեշտ է համարում պատվիրակության աշխատակիցների թվաքանակի զգալի ավելացումը: Պատվիրակությունը հանդիսանալու է Հայաստան-Եվրամիություն կապող օղակը: Իր լիազորությունների շրջանակներում և համաձայն տրված հանձնարարականների՝ Պատվիրակությունն իրականացնելու է.

1. ԵՄ համապատասխան կառույցների հետ բանակցություններ (իրականացում).
2. ԵՄ համապատասխան կառույցների հետ աշխատանքային կապերի ամրապնդումն ու նոր աշխատանքային հարաբերությունների ստեղծումը (իրականացում):

5. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ա) Եվրոպական փորձ

Եվրամիությունը հիմնված է ժողովրդավարության սկզբունքների վրա, որոնց հիմնաքարը լայն հասարակության կարծիքների ինտեգրումն է երկրի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության օրակարգի մեջ: Այդ իսկ պատճառով կարևորվում է ԵՄ-ի և ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ հասարակությանն ստույգ և հավաստի տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև ԵՄ ինտեգրման գործընթացի առավելությունների և հիմնախնդիրների վերաբերյալ ինտենսիվ բացատրական աշխատանքի իրականացումը: ԵՄ նոր անդամ և թեկնածու երկրներում այս հարցը լուծվել է ԵՄ-ի հիմնած ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնների, ինչպես նաև կառավարության և պետական կառավարման այլ մարմինների կազմում հասարակության հետ կապերով զբաղվող կառույցների միջոցով: Նշված կենտրոնները տեղեկություններ են տրամադրել ԵՄ ինտեգրման գործընթացի ամբողջ ընթացքում, իսկ կառավարության՝ հասարակության հետ կապերով զբաղվող կառույցների հիմնական խնդիրն է ԵՄ ինտեգրման մասին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրումը և հասարակական դրական կարծիքի ձևավորումը:

բ) Հայաստանի իրավիճակը

Ներկայումս Հայաստանում չի գործում մասնագիտացված կառույց, որը լայն հասարակության համար պարբերաբար կլուսաբանի է ԵՄ-ի և ԵՄ ինտեգրման հարցերը, ինչպես նաև Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը այդ հարցերով: Հասարակական կարծիքի սակավաթիվ հարցումների հիման վրա, սակայն, կարելի է պնդել, որ Հայաստանի՝ ԵՄ ինտեգրման վերաբերյալ հասարակության կարծիքը դրական է:

գ) Ստեղծվելիք կազմակերպական կառուցվածքը

ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոն (Կ)

ԵՄ ինտեգրումը, հանդիսանալով Հայաստանի զարգացման երկարաժամկետ գերակայությունը, վերաբերում է երկրի ամեն մի քաղաքացուն: Յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի իրավունք ունի տեղեկացված լինելու ԵՄ ինտեգրման գործընթացի ընթացքի վերաբերյալ: Բացի այդ, կարևոր է նաև հասարակությունում ձևավորել և ամրապնդել ԵՄ ինտեգրման վերաբերյալ դրական կարծիք:

Վերոհիշյալ նպատակով ստեղծվելու է *ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոն (Կենտրոն),* որն ունենալու է պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձև: Իր գործունեության ընթացքում Կենտրոնն սերտորեն համագործակցելու է կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության, ինչպես նաև այդ գործընթացում ներգրավված բոլոր մարմինների հետ: Կենտրոնի աշխատանքները համակարգելու է կառավարության աշխատակազմը:

Իր գործունեության ընթացքում Կենտրոնն իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. ԵՄ ինտեգրման, Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների հավաքում և հանրությանը տրամադրում (տեղեկատվությունը պետք է հանրության համար լինի մատչելի) (իրականացում, հաղորդակցում).
2. ԵՄ ինտեգրման, Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման գործընթացների վերաբերյալ հասարակական կարծիքի հավաքման և վերլուծության ապահովում (իրականացում, հաղորդակցում).
3. ԵՄ ինտեգրման գործընթացում ներգրավված բոլոր պետական գերատեսչությունների լրատվության տրամադրման համար պատասխանատու ստորաբաժանումների և/կամ աշխատակիցների հետ սերտ համագործակցություն (նախաձեռնում, իրականացում).
4. ԵՄ ինտեգրման գործընթացին առնչվող փաստաթղթերի հրապարակում (Ազգային ծրագրեր, տարեկան հաշվետվություններ, բանակցությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկություններ) և գրադարանների, ԶԼՄ-ների, ինտերնետի, բուհերի, ՀԿ-ների միջոցով բաշխում և տարածում (իրականացում, հաղորդակցում).
5. մի շարք միջոցառումների միջոցով (իրազեկվածության արշավներ, ինտեգրման կողմնակիցների և հակառակորդների մասնակցությամբ քննարկումներ և այլն) ԵՄ ինտեգրման գործընթացի վերաբերյալ հանրային դրական կարծիքի ձևավորում (իրականացում, հաղորդակցում):

Հավելված 1

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԵՄ ինտեգրում - երկրի արժեքների համակարգի, ժողովրդավարության սկզբունքների, քաղաքականության ներդրման, տնտեսության, ինստիտուտների ստեղծման և իրավական նորմերի համապատասխանեցումը ԵՄ-ում կիրառվող նորմերին:
2. ԵՄ ինտեգրման գործընթաց - երկրի կողմից տարվող աշխատանքները, որոնք հանգեցնում են երկրի նորմերի համապատասխանեցման ԵՄ չափանիշներին:
3. Համակարգում – Լիազոր մարմինների և (կամ) պաշտոնյաների կողմից տարվող աշխատանքները, որոնք կոչված են ապահովելու տարբեր կառույցների կողմից իրականացվող գործառույթների և աշխատանքների ներդաշնակությունը և համալրումը:
4. Ղեկավարում – Լիազոր մարմինների և (կամ) պաշտոնյաների կողմից իրենց ենթակայության տակ գտնվող կառույցների և (կամ) աշխատակիցների կառավարում:
5. Վերահսկում – Լիազոր մարմինների և (կամ) պաշտոնյաների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակի և արդյունավետության վերահսկում:
6. Իրականացում – Լիազոր մարմինների և (կամ) պաշտոնյաների, այդ կառույցների աշխատակիցների կողմից տարվող գործողությունները՝ ուղղված վերջիններիս գործառույթների և առաջադրանքների կատարմանը:
7. Կառավարման համակարգ - Լիազոր մարմինների և (կամ) պաշտոնյաների ներդաշնակ համակարգ, որը պատասխանատու է իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում կառավարման իրականացման համար:
8. Նախապատրաստում - Այն աշխատանքների և գործառույթների իրականացում, ինչը հանգեցնում է որոշումների ընդունմանը:
9. Գործընթաց – Լիազոր մարմնի (մարմինների) կողմից համակարգված կերպով իրականացվող աշխատանքների ամբողջություն, որոնք հետապնդում են հստակ երկարաժամկետ, կամ միջնաժամկետ, կամ կարճաժամկետ նպատակ(ներ):

	Կառույցի ընդհանուր ուղղվածություն	Նախաձեռնում	Պատրաստում	Որոշումների կայացում	Իրականացում	Համակարգում	Վերահսկում	Հաղորդակցում
ՀՀ կառավարություն	ԸՀ	X	X	X	X	X	X	
Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերով ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողով	Հ, Կ			X	X	X	X	X
ԵՄ ինտեգրման ազգային խորհուրդ	ԸՀ	X				X		X
ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողով	ԸՀ	X	X	X		X	X	X
ՀՀ վարչապետ	ԸՀ			X		X		
ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչություն	Հ, Կ	X		X	X	X	X	X
Պետական կառավարման և կարգավորող մարմինների աշխատակազմերի ԵՄ ինտեգրման և միջազգային կազմակերպությունների ստորաբաժանումներ	Կ	X			X	X		X
ՀՀ արդարադատության նախարարություն	Հ, Կ	X			X	X	X	X
Իրավական-թարգմանչական կենտրոն	Կ				X			
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	Կ	X			X		X	X
ՀՀ պետական կառավարման ակադեմիա և այլ մասնագիտացված ուսումնական հաստատություններ	Կ	X			X			
Օգնության ազգային համակարգող	Հ	X	X	X		X	X	
ՀՀ ՖԷՆ ԵՄ և արտերկրյա օգնության համակարգման վարչություն	Կ	X			X	X		X
Գլխավոր բանակցող	Հ, Կ	X	X	X	X	X	X	
ՀՀ ԱԳՆ ԵՄ ինտեգրման ստորաբաժանում	Կ	X			X			X
ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոն	Կ	X			X			X

Հավելված 3

ԸՀ - Ընդհանուր համակարգող
Հ - Համակարգող
Կ - Կատարող